

ԱՆԳԻՏԱՆԱՂՔ ԻՐԱՔԱՀԱՅԵՐԻ ԱՂԵՐԱԸ

Posted on August 1, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



Համօ Մոսկոֆեան, Անքաուա- Երպիլ- Պէյրուֆ, Յուլիս 14-18

Ո՞ր են Հայ Առաքելական Եկեղեցւոյ ղեկավարները, հայ պետականութիւնը, Սփիւռքը, Վատիկանը...



Մուսուլման մի ընտանիք Երպիլում: Դեմքերը դիտաւորեալ մշուշուած են զգուշութեան համար.- Խմբ.

Համայն աշխարհի հայութիւնը 2015-ին ոգեկոչելու է Հայոց Յեղասպանութեան 100 ամեակը: Այսօր, 2014 թուին, տարագրութիւնը, աքսորը, կոտորածները, կողոպուտները շարունակուում են Արեւմտեան Հայաստանի, Հալէպի, Քեսապի հայկական երբեմնի ծաղկուն գաղթօճախներում... գերեզմանատներում:

Համօ Մոսկոֆեան, Անքաուա- Երպիլ- Պէյրուֆ, Յուլիս 14-18

Ո՞ր են Հայ Առաքելական Եկեղեցւոյ ղեկավարները, հայ պետականութիւնը, Սփիւռքը, Վատիկանը...




Մուսուլման մի ընտանիք Երպիլում: Դեմքերը դիտաւորեալ մշուշուած են զգուշութեան համար.- Խմբ.

Համայն աշխարհի հայութիւնը 2015-ին ոգեկոչելու է Հայոց Յեղասպանութեան 100 ամեակը: Այսօր, 2014 թուին, տարագրութիւնը, աքսորը, կոտորածները, կողոպուտները շարունակուում են Արեւմտեան Հայաստանի, Հալէպի, Քեսապի հայկական երբեմնի ծաղկուն գաղթօճախներում... գերեզմանատներում:

Մի ամիս առաջ, նոյն սեւ բախտին էին արժանացել Մուսուլ Նինուէ քաղաքի հայ փոքրաթիւ համայնքը եւ հազարաւոր քրիստոնեաներ, վերապրեալները 1914-1922 թ.-ին կատարուած ահաւոր կոտորածների ու ցեղասպանութեանց՝ Ասորի, Քաղդեացի, Նեստորական համայնքների եւ հազարաւոր եկեղեցիների դէմ:

Այսպիսի իրադարձութիւնների յորձանուտում, լրագրողական հայրենասիրական նպատակներով այցելեցինք իրաքեան Քիւրտիստանի մայրաքաղաք Երպիլ, ընկերակցութեամբ Գանատահայ Տոք. Տիգրան Աբրահամեանի: Հանդիպելով Հայ Առաքելական Եկեղեցւոյ մերօրեայ սրբերից, Տէր Առաքել Գասպարեանի հետ, որը լինելով տեղահանուած ու գաղթական հայ ընտանիքների հոգեւոր հայրը, «Տահէշ»ի մարդակերներից փրկել է հայու որդիներին ու դուստրերին, տեղաւորելով նրանց Երպիլի, Տիգրի, Չախոյի հայոց տներում:

Դրամական փոքր օգնութիւններ է բաժանել ամեն ինչ կորցրած հայ տարաբախտներին Իրաքի հայոց հոգեւոր Առաջնորդ Աւագ Սրբազանը, սակայն կարիքը այնքան մեծ էր, որ մեր եղբայրներն ու քոյրերը զգում են իրենց լքուած Հայ Առաքելական Եկեղեցւոյ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, Սփիւռքի հայ գաղթօճախներից, Մայր հայրենիքից, որոնք զբաղուած են:

«Անպատմելի տառապանքներով է որ կարողացանք դուրս գալ մահուան ու բնաջնջման օղակից:  Այդտեղ տէր ու տիրութիւն անող «Տահէշ»-ի խելագարները սպանում ու գլխատում են

իսլամութիւնը չընդունող, իրենց հիւր հպատակ դառնալ չուզող անմեղ քրիստոնեաներին, հայերին, պայթեցնելով պատմական բոլոր սրբատեղիները” յայտնեց մեր օրերի «Ղեւոնդ Երեց» Տէր Առաքել Գասպարեանը:

“Մենք ապաստան ենք գտել Քիւրտ եւ Ասորի եղբայր ժողովրդների մօտ, Իրաքեան Քիւրտիստանում: Նրանք իրենց կարելի բոլոր միջոցներով օգնում են որ գոյատեւենք: Սակայն մենք օգնութեան ձեռքերի կարիքն ունենք մեր սփիւռքահայ գաղթօճախներից, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, լինելով նրա զաւակները, մեր պետութիւնից, որի քաղաքացիներն են Մուսուլի թէ Իրաքի հայութեան շատ ընտանիքներ: Այո, Հայոց Ցեղասպանութիւնը իր բոլոր արհաւիրքներով կրկնուում է մինչեւ այսօր,” շեշտեց Տէր Առաքել Գասպարեանը:

Այցելեցինք նաեւ տարագրուած ընտանիքների, որոնք լքել են տասնամեակների արհւն քրտինքով ձեռք բերած ունեցուածքը, բնակարանները, յոյսերն ու երազները: Փոթորկայոյզ այս երկրի դժբախտութիւնների գլխաւոր պատասխանատուները Արեւմուտքի ընչաքաղց պետութիւններն են, «Օսմանցիական» սին երազներով օրօրող Թուրքիան է, գլխաւոր հովանաւորները «Ճիհատիստներ»-ի, «Տահէշ»-ի եւ այլ գազրելի կազմակերպութիւնների:

Ինչպէս որ մեզ զգուշացրեց [Իրաքեան Քիւրտիստանի կրօնի լրատուութիւնների Նախարարութեան Եզիտական հարցերի](#) ղեկավար Խեյրի Պոզանին` « Ցեղասպանութիւնը շարունակուում է մինչեւ այսօր եւ մենք, հայերս, Եզիտիներս, որ նոյն խրամատներում ճաշակել ենք թուրքական ոճրագործութիւնների բոլոր տառապանքները` նոյն խրամատներից էլ շարունակելու ենք պայքարը գոյատեւման եւ ապագայի վառ օրերի համար...: Ինչպէս հայերին ու քրիստոնեաներին, նոյնպէս 14 Եզիտի երիտասարդներին վերջերս դաժանաբար սպաննեցին Պաղտատում ոգելից խմիչքներ վաճառելու համար»:



Այս բոլոր ահագնացող փոթորիկները դիմակայելու պատրա՞ստ ենք մենք, հայերս, մեր պատմական դաշնակիցների հետ:

